բանք, զոր երկար լինի մի առ մի 'ի մէջ բերել ասա, (1827· 'ի 22 Յունիսի)։

Սաստիկ կոտորած ժանտախտի 'ի Կարին և 'ի սահմանս նորա, մինչեւ 'ի միում աւուր մեռանիլ միայն յազգէ Հայոց 60—70 անձանց, թող զայլակրօնս։

Կարապետ և Պօղոս Պատրիարքունք յանձնարարական գրովք իւրեանց սուրհանդակաւ առաքեցին յԵգիպտոս զՅովհաննէս վարդապետ Զմիւռնացի սակս կարեւոր գործոյ, եւ նորա պատահեալ 'ի ճանապարհի ուխտաւորացն Հայոց 55 անձանց արգիլեալ 'ի տեղին Խան կոչեցեալ, եւ քահանայ մի բանտարկեալ 'ի Պուլտուր· եւ առեալ 'ի նոցանէ Դատաւորն և Հիւսէին Պէյ 1780 դահեկան տուգանս և արձակեալ, որպէս թէ ուխտաւորք 'ի ճանապարհի իջեւանեալ իցեն 'ի մզկիթն այլազգեաց, որ է աւերակ և կարաւանատեղի հասարակաց· Յովհաննէս վարդապետ արգել զսուրհանդակն ժամ մի և մխիթարեաց զնոսա, գրեաց զդէպսն պարագայիւք առ Զաքարիա վարդապետ, զի յետս պահանջեսցեն զայն տուգանս զոր առեալ էին յանիրաւի· եւ ապա նաւեալ յԱտալիայէ եհաս յԵգիպտոս ('ի 22 Սեպտեմբերի)։ Եւ զի խնդրեալ էին Պատրիարքունք յերեւելեաց տեղւոյն լինիլ ձեռնտու պարտուց Աթոռոյն, որպէս պատուիրեալ էր նոցա Պօղոս եպիսկոպոս յառաջագոյն 'ի գնալն իւր անդ· այլ նոքա ասէին՝ յորժամ սկիզբն արասցեն յԱմիրայից Կոստանդինուպօլսոյ, յայնժամ և մեք օգնեմք· այլ այժմ պատաղեալ է իւրաքանչիւր ոք 'ի գործս իւր, և այսպէս յետս կացին 'ի խոստմանց իւրեանց։ Իսկ Կիրակոս եպիսկոպոս միջնորդութեամբ բժշկապետ Ճիվանիայ առ յանձնարարական գիր 'ի Մէհէմմէտ Ալեայ Փոխարքայէն Եգիպտոսի առ Դատաւորն Երուսաղէմի· զի ըստ հրովարտակի Արքային և խնդրանաց ազգին տացէ Իլամ՝ բաժնիւ (թագսիտ) վճարելոյ զպարտս Աթոռոյն, և Յովհաննէս վարդապետ առեալ զգիրն դարձ արար անտի եւ եհաս յԵրուսաղէմ (յ9 Հոկտեմբերի)· եւ մատոյց Խորհրդականաց զգիրս Պատրիարքաց· և նոցա ընթերցեալ միաբանութեամբ ուրախ եղեն յոյժ· զի սահմանեալ էին 'ի բաժինս վերածել զպարտսն։ Եւ 'ի վաղիւն կոչեցին զԴպրապետ դատարանի և մատուցին նմա զգիրս Պատրի-